Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ**
**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**Հիմնադրամի հոգաբարձուների**
**խորհրդի 30-06-2022 թ. որոշմամբ**
**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»**
**Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**
**հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին**

| | | |
|---|---|---|
| **1. Հիմնադրամի՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» |
| 1.2 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2 |
| 1.3 Պետական գրանցման համարը | | 222.160.840254 |
| 1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2000-04-27 |
| 1.5 ՀՎՀՀ-ն | | 01503448 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)10301000 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | http://www.ysmu.am |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | lparsegyan@mail.ru |
| **2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝** | | |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ | | |
| **3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝** | | |
| | | |
| **4. Կառավարչի անուն, ազգանուն՝** | | |
| ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ | | |
| **5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը** | 3377 | |
| **6. Անձեռնմխելի կապիտալի չափը** | 0 | |
| **7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ** | 0 | |
| **8. Ֆինանսավորման աղբյուրները՝** | | |
| 8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի | 8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը | 8.3 Չափը |
| 8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր | | |
| | պետ.պատվեր ուս | 1,615,922,600 |
| | Պ/Պ բուժսպասարկում պետ.կողմից | 3,843,820,129 |
| | Գիտություն պետ կոմիտե | 292,009,500 |
| | ԲՈՀ | 441,000 |
| | ՀՀ ՊՆ ուսման վարձ | 30,343,950 |
| 8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Հետազոտության ներուժի զարգացումը Արևելյան Եվրոպայում | 4,015,635 |

| | | |
|---|---|---|
| | «ՈՒՂԵՂԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ծրագիր«ՈՒՂԵՂԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ծրագիր | 126,791,493 |
| | ԷՐԱԶՄՈՒՍ + <<ARMDOKT> | 440,410 |
| | ՀՈՐԻԶՈՆ 2020 <<SCAUT>> | 57,671,457 |
| | ՀՈՐԻԶՈՆ 2020 <<GOBRAIN>> | 59,786,700 |
| | ԷՐԱԶՄՈՒՍ + <<MINERVA> | 1,724,484 |
| | ԷՐԱԶՄՈՒՍ + Ասպիրանտական ծրագրեր հանրային առողջության և սոց. գիտությունների ոլորտում | 169,342,590 |
| | ԷՐԱԶՄՈՒՍ + <<SAFEMED>> | 32,985,688 |
| | Ուղեղային վնասվածքների վերահսկում | 5,025,464 |
| | ACCELSIORS KUTATASSERVEZOES | 32,399,584 |
| | MEDIDATA ASCENDIS | 1,223,493 |
| | WORLDIDE CLINICALT | 3,620,609 |
| | IPARMA LL | 1,629,243 |
| | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼ.ՑԱՆՑԵՐ | 159,904,039 |
| | ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 364,829,020 |
| 8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Ստացված կանխավճարներ ուսման վարձի գծով | 7,188,527,940 |
| | Վճարովի բուժսպասարկում | 18,666,308,079 |
| | Հանրակացարանի վճար | 201,508,683 |
| **9. Հիմնադրի ներդրումը՝** | | |
| 9.1 Դրամական միջոցներ | 0 | |
| 9.2 Գույք | 9.2.1 Տեսակը | 9.2.2 Արժեքը |
| | | |
| **10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները** | | |
| 10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝ | 10.2 Նվիրված/նվիրաբերված գույք | |
| | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ | | |
| | | |
| 10.1.2 Իրավաբանական անձինք | | |
| | դեղորայք | 1,028,560,813 |
| | բուժ.սարքավորում | 104,695,792 |
| | սարքավորում | 8,556,440 |
| | գույք | 3,104,340 |
| 10.1.3 Ֆիզիկական անձինք | | |
| | գրականություն | 727,300 |
| **11. Իրականացված ծրագրերը՝** | | |
| 11.1 Ծրագրի անվանումը | 11.2 Ծախսված գումարը | |
| Հետազոտության ներուժի զարգացումը Արևելյան Եվրոպայում | 4,602,273 | |
| Ուղեղային վնասվածքների վերահսկում | 988,416 | |

| | |
|---|---|
| «ՈՒՂԵՂԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ծրագիր«ՈՒՂԵՂԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ծրագիր«ՈՒՂԵՂԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ծրագիր«ՈՒՂԵՂԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» | 220,804,293 |
| ԷՐԱԶՄՈՒՍ + Ասպիրանտական ծրագրեր հանրային առողջության և սոց. գիտությունների ոլորտու | 74,476,941 |
| ԷՐԱԶՄՈՒՍ + <<MINERVA>> | 18,478,431 |
| ԷՐԱԶՄՈՒՍ + <<ARMDOKT>> | 3,452,376 |
| ՀՈՐԻԶՈՆ 2020 <<COBRAIN>> | 72,605,040 |
| ՀՈՐԻԶՈՆ 2020 <<ARICE>> | 117,254,921 |
| ՀՈՐԻԶՈՆ 2020 <<SCAUT>> | 73,803,910 |
| ԷՐԱԶՄՈՒՍ + <<SAFEMED>> | 654,665,488 |
| ACCELSIORS KUTATASSERVEZOES | 32,399,584 |
| MEDIDATA ASCENDIS | 1,223,493 |
| WORLDIDE CLINICALT | 3,620,609 |
| IPARMA LLC | 1,629,243 |
| Կլինիկական , բարձրագույն և հետ բուհական կրթություն | 15,255,224,805 |
| **12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը** | 16,535,229,823 |
| **13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը** | 16,535,229,823 |

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 11 էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն ______________________

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ ______________________

ստորագրությունը, անունը, ազգանունը

# «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

## Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

## 2021թ. դեկտեմբերի 31

# Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն........................................................................ 1

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն........................................................................ 6

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն........................................7

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն........................................................................8

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն ........................ 9

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ......................10

Crowe

## Անկախ աուդիտորական եզրակացություն

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ղեկավարությանը և հոգաբարձուների խորհրդին

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 2021թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի համախմբված ֆինանսական վիճակը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա համախմբված ֆինանսական արդյունքը և համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

### Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» հատվածում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների՝ մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Crowe and Asatryans LLC**
"Dom Moskvy" Business Center,
7, Argishti str., 1st floor,
Yerevan, 0015, Armenia
T. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
general@asatryans.com
**www.crowe.com**
**www.asatryans.com**

**Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ**
"Դոմ Մոսկվի" Բիզնես Կենտրոն,
Արգիշտի փող., 7, 1-ին հարկ,
ք. Երևան, 0015, ՀՀ
Հ. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
general@asatryans.com
**www.crowe.com**
**www.asatryans.com**

**Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար**

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համապատասխան սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի համախմբված ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:

* Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:
* Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն Ալբերտ Ասատրյանն է:

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն-բաժնետեր,
Առաջադրանքի պատասխանատու

27 հունիսի 2022թ.

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

# Հոգաբարձուների խորհրդի կազմը

**Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝** պարոն Մ. Աղամյան

**Հիմնադրի անունից առաջադրված խորհրդի անդամներ**

| | |
|---|---|
| Ա. Հովսեփյան | - ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ |
| Ա. Մարտիրոսյան | - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ |
| Դ. Կարապետյան | - ՀՀ արտաքին գործերի նախարարի խորհրդական |
| Վ. Այդինյան | - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդական |
| Ա. Նազարան | - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ |

**Լիազոր մարմնի կողմից առաջադրված խորհրդի անդամներ**

| | |
|---|---|
| Ա. Ծուքուրյան | - Քիթ-կոկորդ ականջաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ (համաձայնությամբ) |
| Մ. Աղամյան | - «Նորք Մարաշ» ԲԿ-ի տնօրեն (համաձայնությամբ) |
| Գ. Քոչարյան | - Երևան քաղաքի գլխավոր մանկական դիմածնոտային վիրաբույժ,«Շենգավիթ» ԲԿ-ի դիմածնոտային կլինիկայի ղեկավար, բժշկ. գիտ. թեկնածու, դոցենտ (համաձայնությամբ) |
| Ա. Հարությունյան | - Միքայելյան վիրաբուժության ինստիտուտի տնօրենի տեղակալ (համաձայնությամբ) |
| Հ. Սինասյան | - Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոնի տնօրեն (համաձայնությամբ) |

**Պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված խորհրդի անդամներ**

| | |
|---|---|
| Մ. Աղաջանով | - Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կենսաքիմիայի ամբիոնի վարիչ |
| Ի. Մալխասյան | - Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի վարիչ |
| Թ. Սարգսյան | - Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի բժշկական գենետիկայի ամբիոնի վարիչ |
| Հ. Սիսակյան | - Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի սրտաբանության ամբիոնի վարիչ |

| | |
|---|---|
| Ա. Բաբլումյան | - Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ուրոլոգիայի և անդրոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր |

**Ուսանողության կողմից ընտրված խորհրդի անդամներ**

| | |
|---|---|
| Ա. Ռափյան | - Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ասպիրանտ |
| Ս. Բունիաթյան | - Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ընդհանուր բժշկության ֆակուլտետի ուսանող |
| Ս. Մարտիրոսյան | - Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հանրային առողջության ֆակուլտետի ուսանող |
| Տ. Ալեքսանյան | - Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ընդհանուր բժշկության ֆակուլտետի ուսանող |
| Մ. Քոչարյան | - Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ստոմատոլոգիայի ֆակուլտետի ուսանող |

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

| Հազար դրամ | Ծնթ. | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|
| Հասույթ | 4 | 20,235,838 | 16,116,554 |
| Իրացման ինքնարժեք | 5 | (16,068,820) | (12,659,995) |
| Համախառն շահույթ | | 4,167,018 | 3,456,560 |
| Այլ եկամուտ | 6 | 1,751,027 | 1,175,688 |
| Իրացման ծախսեր | | (41) | (46) |
| Վարչական ծախսեր | 7 | (3,858,635) | (3,104,837) |
| Գործառնական այլ ծախսեր | 8 | (796,025) | (683,347) |
| Գործառնական գործունեության արդյունք | | 1,263,344 | 844,018 |
| Ֆինանսական եկամուտ | 9 | 1,283,369 | 972,835 |
| Ֆինանսական ծախս | 10 | (1,344,379) | (926,414) |
| Այլ ոչ գործառնական շահույթ /(վնաս) | | - | - |
| Տարվա արդյունք մինչև հարկումը | | 1,202,334 | 890,439 |
| Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս) | 11 | (331,754) | (247,207) |
| Տարվա արդյունք հարկումից հետո | | 870,580 | 643,232 |
| Վերագրելի՝ | | | |
| Մայր կազմակերպության բաժնետերերին | | 862,040 | 646,124 |
| Չվերահսկվող բաժնեմասին | | 8,540 | (2,892) |
| *Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ* | | | |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո | | - | - |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | | 870,580 | 643,232 |

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2022թ.-ի հունիսի 27-ին

Արմեն Մուրադյան
Ռեկտոր

Լարիսա Պարսեղյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

| Հազար դրամ | Ծնթ. | 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| Ակտիվներ | | | |
| *Ոչ ընթացիկ ակտիվներ* | | | |
| Հիմնական միջոցներ | 12 | 6,762,605 | 6,218,850 |
| Ոչ նյութական ակտիվներ | | 54,925 | 72,127 |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 13 | 3,621,550 | 3,621,607 |
| | | 10,439,080 | 9,912,584 |
| *Ընթացիկ ակտիվներ* | | | |
| Պաշարներ | 14 | 1,467,801 | 1,792,972 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 15 | 2,152,055 | 2,287,895 |
| Դրամական միջոցներ և համարժեքներ | 16 | 2,570,806 | 2,654,944 |
| | | 6,190,662 | 6,735,811 |
| Ընդամենը ակտիվներ | | 16,629,742 | 16,648,395 |
| *Սեփական կապիտալ և պարտավորություններ* | | | |
| Մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի կուտակված շահույթ | | 5,576,402 | 4,707,818 |
| Կապիտալի այլ տարրեր | | 260,273 | 260,273 |
| Ընդամենը մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի սեփական կապիտալ | | 5,836,675 | 4,968,091 |
| Չվերահսկվող բաժնեմաս | | 27,115 | 18,575 |
| | | 5,863,790 | 4,986,666 |
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Հետաձգված եկամուտ | 17 | 2,216,819 | 1,859,429 |
| Վարկեր և փոխառություններ | 18 | 4,369,522 | 4,959,517 |
| | | 6,586,341 | 6,818,946 |
| *Ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Հետաձգված եկամուտ | 17 | 1,217,068 | 1,575,379 |
| Վարկեր և փոխառություններ | 18 | - | 522,590 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 19 | 2,704,141 | 2,480,081 |
| Կրեդիտորական պարտքեր բյուջեին | 20 | 258,402 | 264,733 |
| | | 4,179,611 | 4,842,783 |
| Ընդամենը պարտավորություններ | | 10,765,952 | 11,661,729 |
| Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ | | 16,629,742 | 16,648,395 |

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

| Հազար դրամ | Մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի | | | Չվերահսկվող բաժնեմաս | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|
| | Չբաշխված շահույթ | Պահուստային կապիտալ | Ընդամենը | | |
| 2020թ. հունվարի 1-ի դրությամբ | 3,943,042 | 260,273 | 4,203,315 | 26,839 | 4,230,154 |
| Տարվա արդյունք | 646,124 | - | 646,124 | (2,892) | 643,232 |
| Ավելացում | - | - | - | | - |
| Ներքին շարժ | - | | - | | - |
| Նախորդ տարիների էական սխալների ուղղման արդյունքում առաջացած ճշգրտումներ | 9,728 | - | 9,728 | (5,372) | 4,356 |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 4,598,894 | 260,273 | 4,859,167 | 18,575 | 4,877,742 |
| Տարվա արդյունք | 862,040 | - | 862,040 | 8,540 | 870,580 |
| Ներքին շարժ | | - | - | | - |
| Նախորդ տարիների էական սխալների ուղղման արդյունքում առաջացած ճշգրտումներ | 782 | - | | | - |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 5,461,716 | 260,273 | 5,721,989 | 27,115 | 5,749,104 |

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

| Հազար դրամ | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ներհոսքեր | 20,281,774 | 14,570,412 |
| Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ | (10,070,491) | (8,243,790) |
| Մատակարարներին վճարված դրամական միջոցներ | (2,748,789) | (2,250,054) |
| Վճարումներ ծառայությունների դիմաց | (1,171,451) | (1,422,738) |
| Վճարումներ պետական բյուջե | (3,850,406) | (2,816,121) |
| Այլ ստացված գումարներ | 185,958 | 286,448 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների այլ արտահոսքեր | (1,383,566) | (417,715) |
| *Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ* | 1,243,029 | (293,558) |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | (485,357) | (718,339) |
| *Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ* | (485,357) | (718,339) |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Մուտքեր վարկերից և փոխառություններից | (753,887) | 100,000 |
| Վարկերի մարումից և փոխառությունների տրամադրումից ելքեր | (131,178) | - |
| Շնորհների ստացումից մուտքեր | 434,355 | 1,080,366 |
| Տոկոսների վճարումից ելքեր | (191,264) | (203,168) |
| *Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ* | (641,974) | 977,198 |
| Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում) | 115,698 | (134,699) |
| Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա | (199,836) | 219,896 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ | 2,654,944 | 2,569,747 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ | 2,570,806 | 2,654,944 |

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:



Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 29.11.2022 10:44